

նում: Ղրանց կրօնի հիմունքների մասին մի հաստատված իմանալ չկարացի: Մարգրիին քրիստոնեաներն ստում են, որ նրանք իրանց տան ամենալաւ դուռը միշտ արեւելեան կողմն են շինում եւ իրենց երեսները դէպ ի արեւն են դարձնում: աղօթքի ժամանակ, իրենց մեռելների մազերը փեթում են եւ մեռելի բերանը մի քանի ուղկատ են դնում:

«Հարսանիքը թէեւ Յակոբիկ հոգեւորականի ձեռով է կատարուում, բայց եւ այնպէս, ամուսնացեալներին ման են ածում փողոցում, ինչպէս կարծուում է նրա համար, որ մի մեծ քարի մօտով անցնեն, որին նրանք մեծ պատիւ են տալիս...»

Մինչեւ այստեղ Նիւտը, որի ասելով Տիարպէքիրումն էլ Արեւորդիք կան:

Մօտաւորապէս նոյնն է հաղորդում միսիօնար Մուլթաթը (Southgate) Շէմինիերի մասին 1837թ. — Մօտ մի դար առաջ, ստում է նա, Շէմինիերը կամ արեւապաշտներն իրանց կրօնն ազատ դնանելով ապրում էին Միջագետքի գիւղերում, Մարգրիին մօտերը (մի 15 ընտանիք էլ Տիարպէքիրում): Մի անգամ, երբ Մարգրիին փաշան 1762ի մօտերը նրանց կրօնի մասին տեղեկութիւն ստացաւ, որ Շէմին են, յայտարարեց, որ նա բաց ի կորանից են Տին ու նոր կտակարանից այլ կրօն չէ ծանաչում եւ չի կարող թոյլ տալ:

Ղրանցից ոմանք մահմետական դարձան, ուրիշներն էլ բերին Մարգրին եւ մահուան երկիւղ առին, մինչեւ որ Ասորի եպիսկոպոսը նրանց յայտարարեց իրեն իր Յակոբիկ հօտի մի մասը: Այդպէս էլ համարուում են դրանք մինչեւ օրս, թէեւ իսկապէս մի բոլորովին այլ ժողովուրդ են:

Ղրանք յաճախում են Յակոբիկ եկեղեցին, պատ ու տն կատարում են նրանց հօտ, երեսնաներն մկրտում են եւ հագնում են քրիստոնէի պէս, սակայն, երբեք նրանց հօտ չեն ամուսնանում, այլ միմեանց: Ղորերում նրանցից ոմանք ուղեցին ասորա-կաթոլիկ դաւանութեանն յարել, առանց սակայն իրանց առանձնութիւնները թողնելու եւ Ասորի քրիստոնեաների հետ ամուսնութեան մէջ մտնելու:

Ղրանք պնդում են քրիստոնեաներից տարբեր ծագում եւ տարբեր սովորութիւններ ունենալը:

Թաղման համար թէեւ կանչում են քրիստ. հոգեւորական, բայց նրա հեռանալուց յետոյ, սկսում են իրենց գերագատանի մէջ

գաղտնի ձեւականութիւնները կատարել: Որ սակայն, իրանք չեն խոստովանում, որպէս նաեւ իրանց աղօթքն արեւին ուղղելը: Յարույ մէջ նրանք մի մեծ տօն ունին, երբ մի մեծ անուշահաց են թխում: Այդ հացի չորս կողմը նրանք առ ժամանակ ուրախ պոյոյտ են կատարում. ապա յանկարծախի մարելով կրակը. ամէն միւր ջանք է թափում յայդ հացից մի կտոր փախցնել: — Ղրանք խոստովանում են այս տօնի գոյութիւնը, բայց մերժում են նրանց վերաբերում գիշերային սանդարապետական տօներն ու այլեւայլ ձեւականութիւնները...

Ստորեւ մենք առիթ պիտի ունենանք հայկական Տին եւ նոր աղբիւրներից մի քանի տեղեկութիւններ բերելու Շէմինիերի կամ Արեւորդից մասին, ինչպէս սրանք անուանում են Հայերից:

Այդ տեղեկութիւններից երեւում է, որ Շէմինիերը 11 եւ 12 դարերում բաւական բազմաթիւ էին Միջագետքում եւ իրանց պաշտամունքի մէջ փոքր-Ասիոյ հնագոյն հեթանոսութեանց հետքերն էին պահել, ինչպէս օրինակ ծառերին պատիւներ տալը:

Սակայն, հէնց այսքանն էլ բաւական է համոզուելու համար, որ Շէմինիերը հեթանոսներ էին եւ միայն առ երեսն քրիստոնէութիւն էին ընդունել, մահմետականների աչքին փոշի փշելու համար:

Մի այլ ճամբորդ, Dupré, որ 1807—9. Պարսկաստան եւ Միջագետք այցելեց, Մարգրիի ժողովրդի մասին խոսելով ասում է, որ այնտեղ 800 կուպպաշ կայ որոնք Շէմին եւ կուշուս, այսինքն արեւապաշա. նրանք իրանց խմայելի սերունդ են համարում. չունին ոչ տաճար, ոչ դպրութիւն եւ նրանց կրօնական պաշտամունքը արտայայտուում է միայն ծնւագրութեամբ արեւի առաջ:

Այս տեղեկութիւններին, գրքիս հեղինակը կցում է երես 292ում հայ աղբիւրներից հանած հատուածներ, որ մենք անկախօրէն թննել ու լուսաբանել ենք «Հանդէս ամսօրեայի մէջ», (1896. Թիւ 1):

Իր բազմահամու աշխատութեան վերջում գրքիս հեղինակն ենթադրութիւն է յայտնում, որ Հարրանացոց կամ Սաբեացոց մնացորդները Շէմինիերը կամ որ նոյնն է, Արեւորդիք են:

Այդ ենթադրութիւնն ապացուցանելու փաստեր չի բերում հեղինակը: Սակայն, ով ծանօթ է Հարրանացոց հէնց Chwalsohnի գրքից, պիտի միանգամայն բացասէ այդ ենթադրու-

Թիւնը: — Հարրանացիք մի ծաղկեալ ժողովուրդդ են. մեծ պետական մարդիկ, հմուտ բժիշկներ ու գիտնականներ, հարուստ գիր ու զարուծիւն ունեցող:

Հրանց կրծքը, որ մի ինքնուրույն աղանդ է, կազմուած քաղղեական, պարսկական, հրեական, քրիստոնեական, նոր պղատոնեան եւ գնոստիկեան ուսմութեան, — Արեւորդոց պարզ արեւապաշտութեան հետ բաց ի պատահական նմանութիւններէ պշտունութիւն ունենալ չէր կարող...

Այս ենթադրութիւնն այնքան անհիմն է,
որ մենք մի առանձին կարիք չենք տեսնում այն
հերքելու համար փաստեր բերել:

Խնդիրն այն է, որ Արեւորդիք մինչև օրս մնում են մի տեսակ Հանելուկ . — ՀնորՏալին նրանց Տամարում է հայ. Chwalsohn՝ Հարրա-նցի, է, Ինճիճնանը՝ Եղիգի. Պրոֆ. Եղիսա-րեանը, որ հմուտ է Եղիգիների լեզուին, հեր-բում է այդ կարծիքը. մենք էլ մոլորութիւն էինք ունեցել «Պարճ»ի մէջ եղիգները, որ Արեւորդիք բռնանք են՝... եւ դրա Տամար բաւական նպաստւոր հանգամանքներ կային:

Այսօր էլ, սահայն, կարելի է կրկնել այն,
ինչ որ մերք արտասպառել էինք նոյն խնդրի
առթիվ (տարիներ) առաջ նոյն պառ «Հանգիստ»
մէջ, — Ա. որ Արեւուդէղի հայ վէժ, նոր տը-
րտենք գաղութաւոր էլ վէժ. «հայագործութեան» ոչ
է Հայաստանը (Սպարսկան) բ. Մեր սակցած երե-
ւոյն ինչեւեզ յոյժաւոր է պարզէն նոյն ծագումը:

Թիֆլիզ, հոկտ. 1900 թռւիւն:

ԳՐ. ՎԱՆՑԵԱՆ



9 4 8 5 4 4 2

ՆՂԻՍԱՐԵԹՈՒՊՈԼՍՈՑ՝ ԶԻՆՈՒՈՐԱՆՈՑ ԹԻՆԵԼՈՒ
ԽՆԴԻԲԸ ԿԸ ԹԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Եթե վերև յիշատած գիտնական գրու-
թիւններուն, խորհրդանոցին մատուցուած առա-
ջարկութիւններուն եւ խորհրդածութիւններուն,
— դարձեալ՝ յառաջ բերուած գիտողութիւն-
ներուն եւ խտանցութիւններուն պատմական ձեւ
մը տալու ըլլանք, կը գտնենք թէ քաղաքային
վարչութիւնը՝ խնդիրն իւր կողմանէ ընդգրկե-
լու եւ իւրաքանչիւր՝ իւր բոլոր զօրութիւնն
ամփոփեց եւ անոց ուղղու ազդեցութեան սկսեալ շար-

Ժիւ դէպ ի դուրս՝ Վերին իշխանութեանց հետ։

ԱՅՆՆԵՆ յառաջ փորձ բրաւ — ինչպէս տեսանք — որ այս ծանր պարտաւորութիւնն ազատի ստան Վճարելով. իսկ եթէ այս չի յաջողիր, այն ատեն ինչպէս որ օրէնքը կը հրամայէր, պարտաւանութիւնն իրապէս գործադրելով՝ այնպէս, ինչպէս 1791ին եւ 1811ին տէրութեան աւագածողութեանը կը կարգադրէին:

Քաղաքաբաշխութիւնը՝ բնականապէս ազգային ոգւոյն յատուկ հնարագիտութեամբը, ինզորին զարձուածք մը տալով՝ բանն ուղեց հոն բերել, որ Եղիսաբեթութւպօղիս, առաջին կարգի Թագաւորական քաղաքներուն դասուն մէջ մտնելու անդ, երրորդ կարգի քաղաքացի կարգն անցիւ, ու ըստ այնմ երրորդ աստիճանի տուրք մշտնէ:

Երկրորդ՝ փորձեց, որ թէպէս զինուորաց
բնակութեան տեղ տալն ու նախամիջի ծա-
ռայութիւնն ի բնականոց հատուցանէ՝ ինչպէս որ
տէրութիւնը կը փափաքէր, սակայն այդքէնա-
ծնութեան համար արուելի երկու հազար ոսկի-
ներուն վճարումը՝ զինուորանոց կանչեկիւ
հաշուին մէջ տանցուի. որ բնականապէս քաղա-
քաբախտութեան համար յատ չահաւոր էր:

Բայց զԺուարուծիւնը՝ ստակ գտնելու վրայ էր, որովհետեւ, ինչպէս որ վերն եղած գիտողութիւններէն ըստ բաւականի տեսանք, քաղաքացւոյ առեւտրական յարաբերութիւններէն շատ վատթարացած էին, ու դրամ՝ չկար այս ամենայն իրապէս գործնական հարկեր:

Սակայն, քաղաքային իշխանությունն ամենեւին չլուսահատեցաւ: Գլուխն ասդին անդին զարնելէն ու խորհրդանոցին մէջ խօսելէն, վիճելէն ու յատակագիծներ շննելէն ետքը, այն եմաման գտաւ, որ առ այս փամբան պէտք չկան գրանիները հրաւիրելու համար, ընդհանրապէս ազատ քաղաքացի ամեն քաղաքացին երուն տրուած՝ ոգնեւոր ըմպելի ծախելու արտօնութենէն Եղիսարեմ թուալոցոյ զգայիւնները հրաժարին, մինչեւ որ զինուորանոց շննելու համար որոշուած դրամոց գումարը ժողովուրդի, եւ ալ ժողովուրդն ստակով՝ յիշեալ վիսնակն գործածեն: Ղւստի հասարակութիւնը նախ, իրեն բարեկամ փաստաբանին, որ միանգամայն խելքութեան փաստաբանն ալ էր եւ աւագաժողովին փոխանակ՝ վերատեսուչը, աղաչանաց թուղթ մը գրեց: Ասոր մէջ պատրաստակամութիւն չի ցուցնէ թէ զինուորանոց կանգնելու, թէ զինուորացի տեղ տալու եւ թէ նախամիջի ծառայութիւնն ըստ օրինաց կատարելու:

¹ «Մ. ԲՃ» 1894, պատմակ. ակնարկ բուշաների ան-
թեալիք: